ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"31" մարտի 2011թ № 55Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 1-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին<< ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011թ. մարտի 25-ի N 03/04/1/1165-11 գրությունը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հունվարի 10-ի <Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի հաստիքացուցակը և աշխատակիցների 2011 թվականի պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 1-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ հավելվածի <<Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժին>> մասի 1-ին կետի 6-րդ և 8-րդ սյունակների <<119600>> թվերը փոխարինել <<126800>> թվով, <<Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժին>> մասի 1-ին տողի 6-րդ և 8-րդ սյունակների <<119600>> թվերը փոխարինել <<126800>> թվով, <<Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին>> մասի 2-րդ տողի 6-րդ և 8-րդ սյունակների <<88800>> թվերը փոխարինել <<94400>> թվով, 3-րդ տողի 6-րդ և 8-րդ սյունակների <<64000>> թվերը փոխարինել <<68000>> թվով:

2. Հայաստան Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. մարտի 31
ք. Կապան